կան իրենց կրօնին, բայց ժամանակի ընթացքում, խտրականութեան ու հալածանքներին չդիմանալով լքել են ծննդավայրը եւ Պոլիս կամ արտասահման գաղթել՝ դրանով օժանդակելով թուրք իշխանութիւնների հետապնդած նպատակին, որ է՝ երկրի ներսերը հայկական տարրից մաքրել: Համայնացոյցի միւս ծայրում պոլսահայերն են, տակաւ նուազող գաղութ, որ քիչ թէ շատ որպէս կրօնական փոքրամասնութիւն է ճանաչւում: Ի հարկէ, պոլսահայութիւնն էլ միատարր համայնք չի: Տարբեր են նրա տեղային պատկանելիութիւնը եւ կապուածութիւնը համայնքի կառոյցների հետ:

Այս ուսումնասիրութեանս պեղման միջոցն ու վայրը գեղարուեստական գրականութիւնն է: Հաւատում եմ, որ գեղարուեստական գրականութեան մէջ է արտացոլում անհատի եւ իր միջավայրի փոխ-յարաբերութիւնն ու փոխներգործութիւնը. այնտեղ է երեւում նրա վերաբերմունքը հաւաքական անցեալի նկատմամբ՝ ներկայի պարունակում: Այսուամենայնիւ, պոլսահայ գրականութիւնը այդ վայրը չի եղել: Զարգացման իր ուրոյն եւ իւրայատուկ ճամբան կտրելով, համամարդկային առումով բարձունքների հասնելով հանդերձ, պոլսահայ գրականութիւնը միայն վերջին տարիներում է շօշափում ցաւոտ անցեալի թեման: Դրանից առաջ, կցկտուր յիշողութիւններ, ծննդավայրի ու անցեալի կարօտ, անուղղակի յղումներ անցեալին՝ «Մարմարա», «Ժամանակ» եւ մի քանի անցողակի պարբերականներում լոյս տեսած: Ինչպէս Ֆաթմա Միւգէ Գեօչէքն է գրում, եօթանասունհինգ տարի տեւեց մինչեւ պոլսահայ գրողը համարձակութիւն գտաւ Իսլամ հասարակութեանը պատմելու ջարդերի ու տեղահանութեան մասին, որոնք այնքան կարեւոր մասն